Որոտնավան

Բնակչություն՝ 283

Հեռավորությունը մարզկենտրոնից՝ 120 կմ,
Հեռավորությունը Սիսիան քաղաքից՝ 16 կմ,
Բբարձրությունը ծովի մակերևույթից՝ 1450 մ,

Մտնում է Մեծ հայքի Ծղուկ գավառի մեջ: Գյուղի դիմաց գտնվում է Որոտն գյուղի ավերակները և միջնադարյան գերեզմանատուն, որտեղ 3 խաչքարեր բերվել են պատմության թանգարան: Գյուղի շրջակայքում գտնվող ամենանշանավոր պատմական հնությունը հանդիսանում է Որոտնաբերդը, որի մասին վաղ միջնադարում հիշատակել է պատմիչ Եղիշեն: Ավելի ուշ բերդի մասին տեղեկություններ է հաղորդում Ստեփանոս Օրբելյանը:
Բերդը պատկանել է Սյունիքի թագավոր Սենիքերիմ Ա-ին: Բերդը հիշատակվում է նաև 18-րդ դարում: Սյունիքում ծավալված ազատագրական շարժման ժամանակ բերդը ուրացած Մելիք Բաշրից ազատագրում է Դավիթ-Բեկը: Նշանավոր է նաև Թանգու կամուրջը՝ կառուցված 1855թ.

Տնտեսությունը

Գյուղատնտեսական գործունեության հիմնական ուղղություններն են՝
- անասնապահությունը,
- դաշտավարությունը:
Գյուղատնտեսությամբ զբաղվում է 142 գյուղացիական տնտեսություն:
Անասնագլխաքանակը 2012թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է.
- խոշոր եղջերավոր անասուններ՝ 226 գլուխ,
- մանր եղջերավոր անասուններ՝ 400 գլուխ,
- խոզեր՝ 40 գլուխ,
- մեղվաընտանիքներ՝ 142:
Համայնքում 2011թ. կատարվել է հացահատիկային մշակաբույսերի 220 հա աշնանացան:

Հողային և այլ բնական ռեսուրսներ

Հողեր (ընդամենը)՝ 1812 հա, այդ թվում՝
- Գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1595 հա, որից՝
- վարելահող՝ 353 հա, բազմամյա տնկարկ՝ 25 հա, արոտ՝ 699 հա, այլ հողատեսք՝518 հա
- բնակավայրերի հողեր՝ 56 հա,
- արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 6 հա
- էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝18 հա
- հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 19 հա,
- անտառային հողեր՝ 109 հա, որից անտառածածկ՝ 45 հա
- ջրային հողեր՝ 9 հա